

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Ուրեմն՝ որպէսզի մէկը կատարեալ առաքինի ըլլայ, հարկ է այլ մարդոցմէ աւելի շատ բարի գործեր ընէ եւ չարիքներէն հեռանայ: Բայց ի՞նչ կարելի է ըսել անոնց մասին, որոնք ոչ միայն կը թերանան գերազանց առաքինական գործերէ, այլ այնպիսի բաներէ՝ որոնք պարտաւոր են պահել: Անոնք նոյնիսկ Աստուծոյ հրամաններուն ուսուրբ Եկեղեցոյ օրինադրութիւններուն հակառակը կ'ընեն: Ուրեմն անոնք, որ օրէնքները չեն պահեր՝ թող Աստուծոյ չ'ակնկալեն օրինապահներու ու առաքինիներու վարձքը ստանայ: Յանդրգնութիւն եւ յիմարութիւն է առանց արդիւնքի յուսալ եւ ակնկալել վարձատրութիւնը:

Առաքինութիւնը երկու տեսակ է՝ Աստուածախօսային ու բարոյական: Աստուածախօսայինը կը բաժնուի երեքի՝ հաւատքի, յոյսի եւ սիրոյ: Բարոյականը կը բաժնուի չորսի՝ խոհեմութեան, արդարութեան, արիութեան եւ ժուժկայութեան, որոնք առանց իրարու չեն գործեր: Քանզի, ով որ կատարեալ հաւատք ունի՝ աներկմիտ յոյս ու անկեղծ սէր ունի: Եւ ի նշան կատարեալ սիրոյ արդիւնքի՝ կը պահանջուի բարոյական առաքինութիւններու գործեր, որոնք կը կատարուին խոհեմութեամբ, արիութեամբ ու ժուժկայութեամբ: **ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ**

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ


ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ

Հաւատացեալ կնոջ մը վկայութիւնը:

Կը տեսնէ՞ք թէ Սատանան ո՛ր կը հասցնէ. մայր մը կրնայ անիծել իր զաւակը: Սարսափելի չէ՞: Փոխանակ ուրախանալու, որ տղան հաւատացեալ աղջկայ մը հետ ամուսնացեր եւ ապաշխարեր է, կը խելագարի այդ քայլէն:

Դժբախտաբար, առանց բացառութեան՝ բոլոր անոնք, որոնք խաղաթողթով գուշակներուն կը դիմեն, այլեւս հոգեկան անդորր չեն գտներ: Սաքսոնիայէն կին մը կը գրէ. «Որոշ իմաստով վերստին ծնայ, բայց իսկական, ամբողջական հանգստութիւն չունիմ եւ համոզուած չեմ, որ պիտի փրկուիմ: Անցեալին հմայողի մը քով գացեր եմ, եւ յաճախ խաղաթողթով ապագաս գուշակել տուած եմ: Կարդացեր եմ «Ի՞նչպէս աղատ եւ երջանիկ դառնալ» գիրքը, բայց օգուտ չունի: Օ՛, որքան կ'ողգէի Աստուծոյ երջանիկ մէկ զաւակը ըլլալ: Արցունքներս եւ աղօթքներս ոեւէ օգուտ չտուին: Որքան կ'ողգէի ազատ ըլլալ եւ այդ ուրախութիւնը փոխանցել ուրիշներուն»:

Ի՞նչ սարսափելի է, երբ հոգին կ'ողգէ Յիսուսի հետեւիլ, մեղքերու թողութիւն կ'աղերսէ, բայց հանգիստ չունի... **ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ**



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐՈՂԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՂՄ ԵՆԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԱՆԵՐՈՂՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

ԿԻՐԱԿԻ՝ 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2012 ԹԻՒ 37

ՅԻՍՈՒՍ ԲԻՍՍՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 7.31-37

Յիսուս Տիւրոսի սահմաններէն մեկնելով, Սիղոնի վրայով անցաւ Դեկապոլիսի սահմաններէն եւ եկաւ Գալիլայի ծովեզերքը: Եւ ահա իրեն բերին խուլ եւ համր մարդ մը՝ խնդրելով որ ձեռքը դնէ անոր վրայ: Յիսուս զայն ամբոխէն հեռու մէկ կողմ տարաւ, մատները անոր ականջներուն մէջ դրաւ, յետոյ թքեց եւ դպաւ անոր լեզուին: Ապա երկինք նայեցաւ, հառաչեց եւ ըսաւ. «Եփփաթա՛», որ կը նշանակէ «բացուէ՛»: Նոյն վայրկեանին անոր ականջները բացուեցան, եւ լեզուն բացուելով՝ սկսաւ կանոնաւոր կերպով խօսիլ: Յետոյ Յիսուս պատուիրեց ժողովուրդին որ ոեւէ մէկուն չըսեն: Սակայն ինչքան ալ ան կը պատուիրէր որ չտարածեն, անոնք առաւել չափով կը պատմէին այս մասին: Մարդիկ աւելի եւս կը զարմանային եւ կ'ըսէին. «Այս մարդը ամէն ինչ լաւ կը կատարէ. տեսէ՛ք, խուլներուն իսկ լսել կու տայ եւ համբերուն՝ խօսիլ»:

ՅԻՍՈՒՍ ԲԺԻՇԿՆ ԷՄ ԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԻՆ

Իրական հիւանդութիւնը հոգիի հիւանդութիւնն է եւ ոչ՝ մարմնի: Քրիստոս ամէն անգամ երբ մէկը պիտի բժշկէր, նախ կ'ողգէր անոր մէջ հաւատք տեսնել կամ արծարծել: Սա ցոյց կու տայ թէ ան կը նախադասէ հոգիի բժշկութիւնը բայց բնաւ չ'անտեսեր մարմնի բժշկութիւնը: Քրիստոս ինքն է իրական բժիշկը, որովհետեւ աշխարհի մէջ գոյութիւն ունեցող միլիոնաւոր բժիշկներէն միայն ինք կրնայ կենդանացնել մեր հոգիներն ու սիրտերը: Ան բժիշկն է բոլոր մարդոց: Եղիշէ կ'ըսէ. «Տէրը ոչ թէ աշխարհի միայն մէկ մասին համար եկաւ, այլ՝ աշխարհի բոլոր մասերուն համար: Մէկ մասը բժշկեց, որպէսզի մէկ մասի միջոցաւ, բոլոր մասերը սորվին նոյն բժիշկին մօտ երթալ»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

*ՏՕՆ ՍՐԲՈՒՀԻՈՅ
ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԾՆՆԴԵԱՆԻ
ՅԱՆՆԱՅԷ*

Ս. Կուսի անձը, իբրև գերագանց միջոց փրկագործութեան, անբաժան է Յիսուսի փրկական տնօրինութենէն: Այս պատճառաւ, Ուղղափառ Եկեղեցին սկիզբէն երկիւղած մեծարանք ունեցաւ անոր յիշատակին հանդէպ, մամաւանդ 5-րդ դարէն յետոյ, երբ Եփեսոսի Տիեզերական Ժողովին մէջ դատապարտուեցաւ Նեստորի մոլութիւնը եւ վարդապետականօրէն հաստատուեցաւ եւ ընդունուեցաւ անոր ծնող եւ մայր Աստուծոյ ըլլալու իրողութիւնը, այսինքն Աստուածածինն եւ Աստուածամայր կոչոււմը:

Աստուածածնի կեանքին պատմութենէն Աւետարանի մէջ կը յիշուին այն մասերը կամ կէտերը միայն, որոնք ուղղակի առնչութիւն ունին Յիսուսի կեանքին եւ փրկական տնօրինութեանց հետ. անոր կենսագրութեան մնացեալ այսինքն մեծագոյն մասը կ'ամբողջացուի այն աւանդութիւններով՝ գորս բոլոր հին Եկեղեցիները հասարակաբար ունին եւ որոնք, այդ կերպով, այլեւս տարրացած են եկեղեցական հնագոյն գրականութեան հետ:

Մարիամ Դաւթի ցեղէն էր. անոր ծնողքն էին Յովակիմ եւ Աննա, Բեթղեհէմցիներ կամ Նազարէթցիներ: Աննա ամուլ էր եւ ուխտով ու աղօթքով յղացաւ իր միամայր դուստրը՝ որ կոչուեցաւ Մարիամ: Թէեւ ծնաւ բնութեան օրինաց համեմատ, այսինքն ի հօրէ եւ ի մօրէ, բայց բարոյապէս գերծ՝ սկիզբէն իսկ՝ հասարակ մահկանացուներու ադամական արատաւորութենէն: Այս պատճառաւ, Եկեղեցւոյ մէջ տօնելի եղաւ ոչ միայն իր ծնունդը, այլ նաեւ

յղութիւնը, գոր հայ եկեղեցին կը տօնէ Դեկտեմբեր 9-ին:

Աստուածածնայ ծնունդը Սեպտեմբեր 8-ին է, գոր բոլոր Եկեղեցիները անփոփոխ կերպով կը կատարեն : Պատմական մամբաւանութիւններ չունինք անոր ծնունդին պարագաներուն մասին. կարելի չէ նշել նոյնիսկ թէ ո՞ր ծնաւ անիկա. Բեթղեհէմ թէ Նազարէթ, եւ ո՞ր թուականին: Կը կարծուի՝ նկատի առնելով հրէից մէջ այդ ատեն ի գօրու եղած սովորութիւնները — թէ 14-18 տարեկան էր անիկա, երբ ընդունեց հրեշտակին աւետարար:

ԽՆԴՐԱՆՔ

Գիշեր ու ցերեկ եւ ամէն ժամ կ'աղաչենք քեզի եւ կը խնդրենք, մարդասէ՛ր Տէր: Լսէ՛ մեզ, ո՛վ Աստուած, մեր Փրկիչը. ականջդ մեզի խոնարհեցուր, որպէսզի գուր տեղ չյոգնինք. այլ՝ մեր ճիգը արդարութեան գործ եւ աստուածապաշտութեան պտուղ նկատէ: Ընդունէ՛ մեր աղօթքն ու երկրպագութիւնը, ո՛վ Տէր, եւ քու ողորմութեամբդ հատուցանէ մեզի, առատապէս: Քու ամենագոր աջիդ հովանիին տակ ծածկէ մեզ, եւ Սուրբ Հոգիիդ գորութեամբը գորացուր մեզ, ո՛վ Տէր: Աչքի բերբ պէս պահէ մեզ, եւ քու բարութիւնդ ցոյց տուր մեզի, որպէսզի քու սուրբ անունդ գովուի եւ փառաբանուի: Որովհետեւ բոլոր արարածները մշտնջենաւոր փառաբանութեամբ քու փառքդ կը հիւսեն բարձունքներուն մէջ, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Հովիւ քաջ, հովիւ բարի եւ յաւիտենական, նայէ՛ եւ եկուր օգնէ՛ քու բանաւոր հօտիդ, որ քու շուրջդ հաւաքեցիր քու գթութեամբդ: Որովհետեւ քու դիմացդ կանգնած՝ քու ողորմութեանդ եւ գթութեանդ կը սպասենք, Տէ՛ր: Օրհնէ՛ բոլորը, իմաստացո՛ւր եւ լուսաւորէ՛ ամէնքը եւ բոլորին պարգեւէ՛ երկինքի արքայութիւնդ. որովհետեւ դո՛ւն ես կեանքին տէրը, ողորմա՛ծ Աստուած, եւ քեզի՛ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՀԱՅՀՈՅՈՂՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ան որ ֆրիստոնեան կ'անարգէ, գԱստուած կ'անարգէ, եւ ով որ ֆրիստոնեային հայեոյէ, Քրիստոսի հայեոյած կ'ըլլայ, որ ըսաւ «Մնացէ՛ք մէջս եւ ես ձեր մէջ. ան որ ուտէ մարմինս եւ խմէ արիւնս, ան մէջս պիտի բնակի եւ ես իր մէջ» (Յովի. 6. 57): Պօղոս առաքեալ եւս կ'ըսէ. «Քրիստոնեաները մարմինն են Քրիստոսի, անդամներ՝ անոր անդամներէն: Աստուծոյ տաճար են ֆրիստոնեաները եւ Աստուծոյ Հոգին կը բնակի անոնց մէջ» (Ա. Կորթ. 12.27):

Քրիստոս Աստուած իր անունը դրած է ֆրիստոնեաներուն վրայ եւ Քրիստոս ու ֆրիստոնեաները մէկ են: Ան որ անարգէ ֆրիստոնեային բերանը, անարգած կ'ըլլայ Աստուծոյ անունը, գոր բերանով կ'օրհնեն եւ նոյն բերանով հաղորդութիւն կ'առնեն: Ան որ հաւատքը անարգէ, - հաւատքը Աստուած է եւ մկրտութեան օրը կը հաւատանք Հօր, Որդիին եւ Ս. Հոգիին →, հաւատքին հայեոյելով գԱստուած անարգած կ'ըլլայ: Ան որ նախատէ մեռելին գերեզմանը, նախատած կ'ըլլայ Խաչը, Աւետարանը, Հաղորդութիւնը եւ Քրիստոսի գերեզմանը, որովհետեւ ֆրիստոնեան Խաչով, Աւետարանով կը թաղուի՝ բերանին մէջ ունենալով Ս. հաղորդութիւն, որ Քրիստոսն է, իսկ մարմինն ու ոսկորները կնճուած կ'ըլլան միւռոնով, որ դարձեալ Քրիստոսն է:

Արդ, յայտնի եղաւ որ յիշոց ընողը Աստուծոյ հայեոյիչ է. հետեւաբար պէտք չէ ֆրիստոնեայ կոչել զայն, մինչեւ որ դառնայ չար սովորութենէն եւ պահեմով, աղօթքով փաւ իր մեղքերը եւ Քրիստոսի շնորհով արդարանայ:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

ՄՏԶԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹԸ

Շնորհակալութիւն քեզի, ո՛վ Աստուած՝ մեր տէրը, որ ֆու տեսանելի յոյսով ուրախացուցիր մեզ՝ ֆու բոլոր արարածներդ, իսկ ֆու պատուիրաններուդ հոգեւոր յոյսովը լուսաւորեցիր քեզի հաւատացողները: Մե՛զ ալ գօրացո՛ւր, Տէ՛ր, որպէսզի կարենանք ֆու պատուիրաններդ պահել այսօր եւ ամէն ատեն, որպէսզի լուսաւորուած միտքով՝ միշտ ֆու կամէ՛ք կատարենք եւ ֆու պատրաստած բարիքներուդ հասնինք բոլոր սուրբերուդ հետ միասին, մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի պարգեւած շնորհովն ու մարդասիրութեամբը: Անո՛ր կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Դո՛ւն եւ մեր խաղաղութիւնն ու կեանքը, ո՛վ Միածին Որդի Աստուծոյ, մեր Տէրն ու փրկիչը՝ Յիսուս Քրիստոս: Տո՛ւր մեզի ֆու խաղաղութիւնդ, որ սուրբ առաքեալներուդ շնորհեցիր՝ անոնց վրայ փչելով կենդանացնող եւ ամենագոր ֆու Սուրբ Հոգիդ: Որպէսզի մե՛նք ալ աշխարհէն եկող ամէն տեսակի փորձութիւններէն խաղաղած՝ տաճար եւ բնակարան դառնանք աստուածային շնորհներուդ, եւ շնորհակալութեամբ փառաւորենք քեզ՝ ո՛վ Քրիստոս, մեր Աստուածը, Հօրը եւ Սուրբ Հոգիիդ հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
13.1-11

Ահաւասիկ Բաբելոնի վերաբերող Տիրոջ պատգամը որ յայտնուեցաւ Ամոսի որդի Յայիին.-- Պատերազմի դրօշ կանգնեցէ՛ք մերկ լերան վրայ, ո՛վ իարայելացիներ, բարձրադադակ ողջունեցէ՛ք եկող բանակները, մի՛ վախնա՛ք, ձեռքով նշան ըրէ՛ք անոնց որոնք կու գան Բաբելոնի վրայ:

Ինձի համար նուիրագործուած պատերազմիկներն են անոնք, որոնք եւ Բաբելոնի դէմ պիտի դրկեմ որպէսզի գայն նուանելով բարկութիւնս յագեցնեն եւ ինձի հետ ուրախանան:

Լսեցէ՛ք լեռներուն վրայ բազմութիւններու աղմուկը. ձայնը բազմաթիւ ազգերու, ձայնը թագաւորներու եւ հաւաքուած ժողովուրդներու: Երկնաւոր Զօրքերու Տէրը ի՛նք հրամայեց սպառագինուած այս ժողովուրդներուն, որ գան հեռու երկիրներէն, հեռաւոր հորիզոններէ. եւ իր պատերազմիկներուն հետ Տէրը ինք կու գայ ամբողջ աշխարհը անբերու:

Ողբացէ՛ք, որովհետեւ մօտ է Տիրոջ օրը, արդէն կը հասնի Աստուծոյ հարւածը:

Այդ պատճառով ալ բոլորին ձեռքերը պիտի թուլնան, մարդոց սիրտերը վախով պիտի լեցուին. իշխանները խռովքի պիտի մատնուին, ծննդական կնոջ մը պէս երկունքով պիտի բռնուին. ամէն մարդ իր ընկերը պիտի մեղադրէ եւ ամօթէն իրենց դէմքը բոցի պէս պիտի կարմրի:

Արդարեւ ահա կու գայ Տիրոջ օրը, երբ Տէրը անողոք գայրոյթով ու սաստիկ բարկութեամբ անապատի պիտի վերածէ աշխարհը եւ անկէ բնաջինջ պիտի ընէ մեղաւորները:

Շարունակել Աստուածաշունչէն

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԻ ՆԱՄԱԿԸ
ԿՈՐԻՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ
7.4-16

Մեծ վատահուփիւն ունիմ ձեր վրայ. մեծապէս հպարտ եմ ձեզմով: Մեր կրած բոլոր նեղութեանց մէջ ինքզինքս միտիթարուած եւ մեծապէս ուրախ կը գգամ: Որովհետեւ Մակեդոնիա հասնելէն ի վեր երբեք հանգիստ չունեցանք, այլ ամէն կողմէ նեղութիւն: Մէկ կողմէ արտաքին թշնամութիւնները կը նեղէին մեզ, իսկ ներքինապէս՝ մեր վախը: Բայց Աստուած, որ կը միտիթարէ սրտաբեկները, Տիտոսի գալովը մեզ միտիթարեց:

Ուրախացուցիչը միայն Տիտոսի գալը չէր: Ուրախացանք մանաւանդ, երբ լսեցինք, թէ ի՛նչպէս գոհ մնացած էր ձեզմէ: Մեզի պատմեց թէ անակութեամբ կը սպասէք ինձի, թէ ո՛րքան ցաւած էք պատահածին համար եւ թէ ի՛նչպէս կապուած էք ինձի: Զէք կրնար երեւակայել որքա՛ն ուրախ եմ: Ճիշդ է որ նամակովս քիչ մը վշտացուցի ձեզ, բայց հիմա չե՛մ գղջար ըրածիս, թէ եւ գրելու վերջ գղջացեր էի, քանի կը տեսնեմ թէ այդ նամակս միայն կարն ժամանակ մը վշտացուցեր է ձեզի: Ուրախ եմ հիմա, ո՛չ թէ ձեզ ցուցուցած ըլլալուս համար, այլ որովհետեւ այդ տրտմութիւնը պատճառ եղաւ որ ապաշխարէք: Եւ որովհետեւ ձեր տրտմութիւնը Աստուծոյ գործին ծառայեց, եւ պէտք չունիմ այլեւս խտտութեամբ գալու ձեզի:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑՄՆՈՒԹԻՒՆԸ
ՍՍՏՈՒՄԾԱՇԱՐԻՆՉԷՆ: